ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՀՀ-ԿԱ-ՊԵԿ-ԲԸԱՀ-ԱՊՁԲ-1 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար ռադիոկայանների ձեռքբերման գահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավարի 29.04.2016թ. N 1/13-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 02.05.2016թ. ժամը 11-00-ին, ՀՀ ԿԱ ՊԵԿ վարչական շենքում, ք. Երևան, Մ.Խորենացու-3 հասցում: Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Հ.Մազմանյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Գ.Քառյանը, Ա.Ջուլհակյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ
Հայտերի գնահատման մասին

-Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով «Հենմարքոմ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը որոշեց՝
-«Հենմարքոմ» ՍՊԸ-ին ճանաչել հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

-ՀՀ-ԿԱ-ՊԵԿ-ԲԸԱՀ-ԱՊՁԲ-1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ հրավերի պահանջներին բավարարող գնահատված հայտ ներկայացրած և նիստին ներկա «Հենմարքոմ» ՍՊԸ-ի տնօրեն Է.Ասիկյանին հրավիրեց մասնակցելու ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշման 74-րդ կետի 1-ին ենթակետի զ/ կետի պայմաններով բանակցությունների:
-Բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին «Հենմարքոմ» ՍՊԸ-ն ներկայացրած գնային առաջարկը թողեց անփոփոխ:
-գնահատող հանձնաժողովը որոշեց՝
1.Ներկայացված հայտի հիման վրա և հաշվի առնելով, որ հիշյալ գնման ընթացակարգին «Հենմարքոմ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացրած գները չեն գերազանցում այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը՝ «Հենմարքոմ» ՍՊԸ -ին հայտարարել առաջին տեղը զբաղեցրած մասնակից:
2. Սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում ներկայացնել առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հրավերի 2.1 կետի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:
Գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից ստացված եզրակացությունը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը, ժամը 10-00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Հ.Մազմանյան

Անդամներ՝ Գ.Քառյան

Ա.Ջուլհակյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՀՀ-ԿԱ-ՊԵԿ-ԲԸԱՀ-ԱՊՁԲ-1 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար ռադիոկայանների ձեռքբերման գահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավարի 29.04.2016թ. N 1/13-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 29.04.2016թ. ժամը 14-00-ին, ՀՀ ԿԱ ՊԵԿ վարչական շենքում, ք. Երևան, Մ.Խորենացու-3 հասցեում: Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Հ.Մազմանյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Գ.Քառյանը, Ա.Ջուլհակյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ
Հայտերի բացման մասին

-ՀՀ-ԿԱ-ՊԵԿ-ԲԸԱՀ-ԱՊՁԲ-1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Հ.Մազմանյանը տեղեկացրեց, որ ՀՀ-ԿԱ-ՊԵԿ-ԲԸԱՀ-ԱՊՁԲ-1 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգին մասնակցելու համար /29.04.2016թ. թիվ-1/18-2/13679-16 գրությամբ/ էլեկտրոնային ծանուցմամբ հրավեր էր ուղարկվել՝ «Հենմարքոմ» ՍՊԸ-ին:
-ՀՀ-ԿԱ-ՊԵԿ-ԲԸԱՀ-ԱՊՁԲ-1 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգին հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.
«Հենմարքոմ» ՍՊԸ-ն (ք.Երևան, Ավան Դուրյան 57$_2$. բն.23)
-գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ «Հենմարքոմ» ՍՊԸ -ի կողմից ներկայացված ՝
ա/ հայտ պարունակող ծրարը կազմված և ներկայացված է հրավերով սահմանված կարգով.
բ/ բացված ծրարում առկա են պահանջվող (նախատեսված) փաստաթղթերը և դրանք կազմված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան.

Մասնակցի կողմից առաջարկված գինը հետևյալն է.
«Հենմարքոմ» ՍՊԸ

Չափա-բաժինների համարները	Ապրանքի անվանումը	ԱԱՀ	Առաջարկված ընդհանուր գինը ՀՀ դրամ
1	Ռադիոկայաններ-1 դյուրակիր ռադիոկայան Hytera DMR PD665 կամ համարժեքը (Լրացուցիչ մարտկոցով և ականջակալով)	-	2720000
2	Ռադիոկայաններ-2 դյուրակիր ռադիոկայան Hytera DMR PD365 կամ համարժեքը (Լրացուցիչ մարտկոցով և ականջակալով)	-	1700000
3	Ռադիոկայաններ-3 մեքենայի ռադիոկայան Hytera DMR MD785՝ կամ համարժեքը ալեհավաքով	-	700000
4	Ռադիոկայաններ-4 բազային ռադիոկայան Hytera DMR MD785՝ կամ համարժեքը	-	1648000

*«Հենմարքոմ» ՍՊԸ-ն ԱԱՀ վճարող չէ:

-«Հենմարքոմ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության նպատակով գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել 1 աշխատանքային օրով և գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2016 թվականի մայիսի 2-ին ժամը-11.00-ին, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մ.Խորենացու-3 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Հ.Մազմանյան

Անդամներ՝ Գ.Քառյան

Ա.Ջուլհակյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան